


831.998
U-43



ՅԱԿ. ԱՂԱԲԱՐ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՊԱՏՄԻԱՆՔ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԹԻՖԼԻՍ, 1908 թ.

ՀԱՅՈՎԱՆ ՎԱՐԱՐ ՎԱՐԱՐ ՎԱՐԱՐ ՎԱՐԱՐ

2011-0

ՅԱԿ. ԱԴԱԲՈԲ

891.995
Վ-43 ԿՐ.

ԳԻՍԱԿԻ

ԱԼՄԱՍԸ


ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան «Ա. Մահմետի-Յակոբեան և որդ.»
1908

Հ ԳԻՍԱԿԻ ԱԼՄԱԾՎԵ Հ



աւառական քաղաքներից մէկում
գտնուում էր Գիսակենց տունը:
Այդ տան հաւատարիմ պահապանն
էր քաջ Ալմասը—Գիսակի բրդուտ
և դեղեցիկ շունը: Նա ո՛չ միայն
ճանաչում, այլև շատ էր սիրում իրենց տան բոլոր ան-
դամներին, սկսած ծնողներից մինչև փոքրիկ կուսիկը:
Նրանք բոլորն էլ լաւ գիտենալով իրենց շան հաւատար-
մութիւնը, փոխադարձաբար սիրում և փաղաքում էին
նրան: Խոկ Գիսակն այնքան մտերմացել էր նրա հետ, որ
օր ու գիշեր, համարեա թէ անբաժան էր նրանից և այդ-
պատճառով Ալմասը համարուում էր Գիսակի շունը, նրա
աշակերտը, մինչև անդամ նրա խաղընկերը:

Մեր պապերի ասած խօսք է. «Որդին հօրն ու մօրը
կը նմանի, ապրանքը՝ տիրոջը». Ճիշտ այդպէս էլ Գիսակն
իր ծնողների և Ալմասն էլ իր տիրոջ նման շատ բարե-
սիրու էին: Մանաւանդ այդ երկու ընկերակիցները
շատ նման էին միմեանց՝ նաև իրենց բնաւորութեամբ.
որքան Գիսակը բարի և ազնիւ մանուկ էր, այնքան Ալ-
մասը ճարպիկ և խելացի կենդանի: Որքան առաջինը՝
կը ակու և ընդունակ, այնքան երկրորդը՝ ժիր և իմաս-

տուն։ Երբեմն նրանց հետ էր լինում Գիսակի քոյրը՝ երկու տարեկան թոթովախօս Լուսիկը, որն իր փիրուզեայ աչքերով ու նախշուն դէմքով, իր գանգուր մազերով ու թմփիկ կազմւածքով՝ շատ էր սաղ գալիս նրանց հետ։

Ալմասն ամենքին գուրեկան էր։ Ով մէկ անգամ տեսնում էր նրան, այնուհետև առանձին հետարքը թութեամբ էր նայում նրա վրա։ Նրա գանգրահեր գեղեցիկ մարմինը և կանգուն ու քնքոյշ ականջները, նրա վառվուն արմաս աչքերն և արագափաղ ու միջակ ոտքերը, մանաւանդ նրա բրդոս և անհանդիս պօչը՝ այնքան սիրելի և փայփայելի էին Գիսակին, որ նա ամեն խաղից յետոյ՝ երբ շունը նրան անչափ ուրախացնում էր, իսկոյն փաթաթւում էր շան վզով, համբուրում և ասում։

—Կեցցէ՛ Ալմասիկս, արի՛ գնանք կարկանդակ տամ։

—Հա՛ֆ-հա՛ֆ, հա՛ֆ-հա՛ֆ, պատասխանում էր շունը ուրախաճայն և աջ ու ձախ թռչկոտելով, հետեւում նրան։

Գիսակն ի՞նչ անէր-չանէր, ուր գնարչգնար՝ Ալմասն հետեւում էր իր խաղընկերին։ Սա առաւօտեան արթեանալուց և լացւելուց յետոյ՝ նախաճաշիկն առանց շանը չէր ուտի։ Դուրս գնար բակր խաղալու կամ՝ պարտէղ զրունելու, առանց ընկերի մի բայլ չէր անի, մի խօսքով, քիչ էր մնում, որ Ալմասը նրա հետ գպրոց էլ գնար։

—Ալմասիկս, արի՛ գնանք, մատիտ առնենք։ Եւ երկու ընկերները՝ միմեանց հետ խաղալով ու վազվելով գնում էին խանութ, մատիտն առնում և վերադառնում։


—Ալմաս ջան, արի նախաճաշիկ անենք։ Եւ շունը գնում էր. երկուսն էլ ուտում, կշտանում էին։

Երբ ամենայն ախորժակով նրանք նախաճաշում էին միասին, Գիսակը պայուսակն առնում էր ու պատրաստում գպրոց գնալու։

—Տե՛ս, գպրոց եմ գնում, Լուսիկիս, լա՛ւ նայիր, պատրիրում էր Գիսակը շանը ու ինքը ճանապարհուում։

Ալմասը՝ փոքրիկ տիրոջ պատւերը մտքումը, մօտե-

նում՝ էր Լուսիկին ու մկում նրա հետ խաղալ։ Այնքան ժամանակ զբաղեցնում և փաղաքշում էր նրան, մինչև որ մայրիկը դործը վերջացնելով՝ օրօրոցը փափուկ-մափուկ պատրաստում էր և Լուսիկին պառկացնում քնացնելու։ Շունն իր անելիքը լաւ դիտէր։ Նա շատ անգամ էր տեսել, թէ ի՞նչպէս Լուսիկին քնացնելիս՝ Գիսակը նստում էր մօտը և մայրիկից սովորած նանիկն երգելով՝ օրօրում



«Ճիտ» էր անում Լուսիկին և մրափում

էր օրօրոցը։ Խոկ այժմ, Գիսակի բացակայութեան ժամանակ, կարծես թէ ինքն էր ուզում փոխարինել նրան։ Նա այնքան ժամանակ չէր հեռանում օրօրոցից, մինչև որ Լուսիկի աչիկներին քուն գալով, մուշ-մոշ քնում էր նա։

Մայրիկը տեսնում էր այս և գովաբանում նրան։

—Այս, շատ ապրես, Ալմասիկ ջան, Գիսակը որ գայ՝ երկուսիդ էլ քաղցր կարկանդակ եմ տալու։

Այնուհետև Ալմասը մայրիկի խօսքերից խրախուսւած՝

Երբ Լուսիկին քնացնում էր՝ պառկում էր օրօրսցի տակը՝
ամեն անդամ ճիշտ միևնոյն տեղը՝ գլուխը՝ դնում էր
իր թաթերին և պոչը ձգելով օրօրոցի ոտքի վրա՝ որպէս
թէ «ճիտ» էր անում Լուսիկին և մրափում։ Ալմասն այս
դրութեան մէջն անդամ զգոյշ էր։ Մի փոքր ձայն, մի
թեթե շարժում և նա խոյն ոտքի էր ենում և հոկում
իր սիրելի Լուսիկին։



Պարոցից վերադառնալուն պէս՝ հազիւ ճաշում էր
Գիսակը և այնուհետեւ, իր սովորական ժամերին, մինչև
ուշ գիշեր, նա զբաղւած էր Ալմասով։ Թիշ էր մնացել,
որ նա իր ընկերոջը զանազան խաղերից զատ՝ այլև խօ-
սել սովորեցնէր։ Եւ ի՞նչ... զարմանալի ընդունակութեամբ
Ալմասը հասկանում էր Գիսակի ամեն մի պատէրը, նրա
իւրաքանչիւր խօսքը։ Կասէիր՝ նա ո՛չ թէ անբան ու ան-
լեզու անասուն լինէր, այլ ասուն ու խօսուն մի մանուկ։
Սմեն անդամ, երբ Գիսակը գասերը սերտելուց յե-
տոյ դուրս էր գալիս բակը խաղալու՝ նրա կողքին ան-
պակաս էր իր սիրելի ախտէրացուն, որ առանց դժւարու-
թեան միշտ մասնակցում էր նրա բոլոր խաղերին։

— Սիրելիս, գնանք գնդակ խաղանք, ասում էր Գիսակը։
— Ո՛ւ ո՛ւ ա՛ֆ, հա՛ֆ-հա՛ֆ, այսինքն թէ՝ խաղանք-
խաղանք, պատասխանում էր շունը և խոյն վազում էր
գէպի բագի մի ծայրը, Գիսակի դիմացը կանդնում և նրա
գնդակ ձգելուն սպասում։

— Ա՛ռ, բռնի՛, գոչում էր Գիսակը գնդակը շպոտելով։
Շունը ծուլծուլ էր լինում, ուրախաձայն կլանչում
և ցատկում էր ու բերանով բռնում գնդակը։ ապա տա-
նում Գիսակի սաների մօտ վայր գցում։ Խակ երբ Գիսակի-
ձդած գնդակը պատահմամբ կտուրը կամ փողոցն էր ընկ-

նում, խոյն Ալմասը հասնում էր նրա յետեից և գըտ-
նում, բերում էր ու կրկին յանձնում ընկերոջը։

Նատ անդամ՝ երբ գնդակախազից ձանձրացած, Գի-
սակը ցանկանում էր պարտէզ մտնել ու հայրիկի նման
մշակրւթիւն անել, դառնում էր շանը և ատում։

— Ալմաս շա՞ն, գնանք պարտէզ։

— Հա՛ֆ-հա՛ֆ, ո՛ւ ո՛ւ ա՛ֆ-հա՛ֆ, լա՛ւ, լա՛ւ, շա՞տ
լա՛ւ, պատասխանում էր շունը և վազելով, գնում էր բա-
հը կամ քրոնդը բերանն առնում ու քարշ տալով տա-
նում գէպի պարտէզ։ Կամ թէ մարդերից քաղւած աւե-
լորդ կանաչները՝ բերանով դուրս թափում։

Այս ամենը գեռ բաւական չէր. Ալմասը շատ անդամ
էր ընկերոջ հետ կասես թէ երդում էլ էր։ Երբ Գիսակն
ուրախ արամագրութեան ատկ էր լինում՝ վերցնում էր
հայրիկի ձեռնափայտն և իրենց ուսուցչի նման «չափ»
տալով երգւմ էր այդ օրը սովորած կամ մի ուրիշ ծա-
նօթ երգ։ Շունը ոգեսրւելով նրա մանկական քաղցր և
գրաւիչ ձայնից՝ ծառս էր լինում յետին երկու սոքերի
վրա, աջ թաթով յենուում էր Գիսակի կողքին, ձախով կար-
ծես թէ չափ էր ատլիս տիրոջ նման և ինքն էլ ձայնակ-
ցում էր Գիսակին։ Աս՝ տեսնելով իր շան այդ աեսակ ըն-
դունակրւթիւնը, կռանում էր, փաթաթւում նրա վզովը,
գրկում էր նրան և անդադար համբուրում նրա փափուկ,
մետաքսապատ այտերը, գունչն ու աչքերը։

— Կեցցե՛ս, ախտէր շան, կեցցե՛ս ։ Դու հազար ան-
դամ ընդունակ և խելօք ես՝ մեր գպրոցի ծոյլ աշակերտ-
ներից, որոնք մի բան սովորեցնելու համար՝ այնքան
պատժւում և առանց ճաշի են մնում։

Շունը՝ կարծես թէ հասկանալով այդ խօսքերը՝ աւե-
լի աշխուժանում էր և նրա խելացի աչքերի մէջ նշմար-
ուում էր սէր և ուրախութիւն։

Մինչ այս մինչ այն, օրը մթնում էր Երկու ախ-
պէրացուները շտապում էին տուն՝ հայրիկի ու մայրիկի մօտ։

Այստեղ էլ գարձեալ Ալմասն էր Գիսակին զբաղեցնողը
նա Գիսակի կողքին նստած ամենայն հետաքրքրութեամբ
լսում էր նրա կարգացածը և դիտում դըքի մէջ նկար-
ւած զանազան
պատկերներ:
Նատ անդամ
նոյնիսկ՝ կար-
ծես Ալմասն
էր ուզում թեր-
թել գիրքը,
իսկ երբ Գի-
սակը յոդում
էր, յօրանշե-
րով ասում էր
նրան:

Զանիկս,
քունս տանում
է, իսկոյն Ալ-
մասն իր սո-
վորական ծա-
ռայութիւնն էր
անում նրան,
կօշիկները, շո-
րերը և դըլ-
խարկը տա-
նում էր իր
մշտական տե-
ղը պահում:
Մի խօսքով,

Ինքն էլ ձայնակցում էր Գիսակին

Ալմասը ոչ միայն Գիսակի հմտա խաղընկերն էր և մտե-
րիմ ախտէրացուն, այլև հաւատարիմ պահապանը և ուշ
շագիր սպասաւորը:



Պատահում էր շատ անգամ, երբ մայրիկը սաստիկ
զբաղւած լինելով՝ գժւարանում էր տան բոլոր գործերը
մենակ կատարել: Թէև իրենց Ալմասը Գիսակի փոխա-
նակ միշտ զբաղեցնում էր փոքրիկ Լուսիկին և այդպի-
սով հնարաւորութիւն էր տալիս մայրիկին իր գործին
կենալու, բայց և այնպէս մայրիկը գարձեալ ծանրաբեռնուած
էր: Բացի կար ու կարկատանից, տան մաքրութեան և
շնորհիքի հոգուը քաշելուց՝ այլև ամեն օր իրենց
ընտանիքի մեծ ու փոքրի համար միշտ կեր ու խում էր
պատրաստում՝ թէ ճաշերին և թէ նոյնիսկ գիշերները:

Եւ ահա, այս վերջին գործում մանաւանդ, խելօք շունը
շատ մեծ օգնութիւն էր հասցնում մայրիկին: Նա առաւո-
տեան կանուխ հայրիկի հետ «բազար» էր գնում. այնքան
ժամանակ սպասում էր նրա մօտ, մինչև որ հայրիկն
ամեն ինչ առնում էր, կողովի մէջ դարսում և ապա
շանը տալով, ամենայն հանգստութեամբ պատրիքում էր.

— Ալմաս ջա՞ն, տուն տա՛ր, մայրիկին տո՛ւր, տե՛ս,
ճանապարհին չույանաս:


Ըունը վրա էր ցատկում, ատամներով պինդ բռնում
կողովի տանգերից և մի քանի դրվանքայ ծանրութիւն
ունեցող պաշարով լի կողովը թեթեսութեամբ բարձրա-
ցնելով, չափ էր ընկնում՝ գէպի տուն՝ մայրիկին յանձնե-
լու: Ճանապարհին թէկուղ հազար մարդ փորձէր նրանից
մի բան խլելու, բա՛ս չէ, էնպէս պո՛ւկ էր անում և
վազէվազ տուն համում, որ տեսնողները մնում էին զար-
մացած՝ նրա ճարպիկութեան վրա:

— Կեցցե՛ս շո՞ւն, վարձու մշակեցը հազար անդամ
խնամքով է տանում ծանրոցը:

— Մի տե՛ս, Միսակ, էն շանը, տե՛ս ի՞նչպէս է վազում,
կասես թէ բերանին ոչ ծանրութիւն կայ, ո՛չ էլ կողով:

— Դոչաղ անասո՞ւն, երևի տէրը սովորեցրել է սրան,
որ մսեղէն ու զանազան ուտելեղէններն առանց փորձան-
քի և այդպէս խնամքով վագեցնում է դէպի տուն:

Ահա այս ու այսպիսի զարմացական ու գովարանա-
կան խօսքերով էին ցոյց տալիս մարդիկ իրենց համակրու-
թիւնը դէպի Գիսակի շտնը: Եւ նա արժանի էր... նա դիտէր,



Հնում բերում էր սրբիչը

որ մայրիկն իրեն է սպասում, որ Գիսակն առանց իրեն տես-
նելու գպրոց չի գնայ—և ահա, շտապում էր տուն՝ ինչ-
պէս մի գիտակ ու դործի գնացող մարդ և ինչպէս ըն-
տանիքի մի հարազատ անդամ:

Տուն համելուն պէս, մայրիկն ու Գիսակը նրան դի-
մաւորում էին, կողովս ստանում և նրան մի որեէ պա-
տառով հիւրասիրում:

— Այ շատ ապրես գու, Ալմաս ջան, մէկ էլ ինձ
նեղութիւն չը տւիր՝ փողոց գնալու, ասում էր մայրիկը՝
շոյելով նրա գլուխը:

— Ալմասիկս, այսօր, մինչև իմ վերադարձը, տանից
չը հեռանաս, մայրիկին կօդնես, կուսիկին լողացնելու է:
Եւ շունը՝ որպէս թէ մի բան հասկանալով՝ Գիսակի
ոտքերի տակ պորտիկ-պորտիկ էր դալիս ու վընդվընդում:

Ալմասը շատ խելացի կենդանի էր. մէկ անգամ սու-
փորածն երբէք մաքիցը չէր հանում, չէր մոռանում: Նա
սուրյիշողութիւն ունէր, աչքով տեսածը՝ բանական մարդու
պէս, կարծես թէ իւրացնում էր: Նա համարեա թէ եօթութ
տարեկան էր արդէն՝ Գիսակինց տանը ծնւած, այնտեղ
մնւած ու մեծացած, այնտեղ վարժւած ու սովորած: Եւ
այդքան ժամանակամիջոցում՝ արեցտարի աւելի բացւել,
վարժւել ու կրծւել էր: Նրան այդ կրծութիւնը տւել
էր Գիսակի հանգուցեալ եղբայրը՝ Տիգրանը, երբ Գիսակը
գեռ երեխայ էր: Ինըը՝ Տիգրանը անժամանակ վախճանեւ-
լով, ծնողները նրա յիշատակի համար խնամքով պահել, մե-
ծացրել էին Ալմասին. ինչպէս իրենց հարազատ զաւակի
սիրած ու փայփայած խաղընկերին: Ահա այսպէս,
երբ Գիսակը եօթութ տարեկան էր՝ շունն էլ գրե-
թէ նրան հասակակից էր, նրա հետ մեծացած և կրծւած:
Ու եթէ այսօր նա այդքան ընդունակութեան տէր էր՝ այդ
խնամքով պահելուն, լաւ կրթելուն և մէկ էլ նրա խելա-
ցիութեանը պէտք է վերագրել:

Իր սիրած ընկերոջ խօսքի համաձայն՝ շունը մայրի-
կի և կուսիկի մօտից չէր հեռանում: Նա մայրիկի հա-
մար մի սպասաւորի չափ օգտակար էր, կուսիկի համար՝
մի ծծմօր: Զարմանալի կերպով օգնում էր նա մայրի-
կին մանաւանդ այն ժամանակ, երբ նա լողացնում էր
փոքրիկ կուսիկին:

Հենց որ մայրիկը լւացքի տաշտակը գնում էր նրա
տարանի վրա՝ տաք ու հով չուրը մէջն ածում, երբ կու-

սիկին մերկացնում էր և լողացնելուց յետով ջրից հանում նրա
թմբիլիկ մարմինը սրբելու, իսկոյն Ալմասը վագելով գնում-բե-
րում էր սրբիչը ու վիզն երկարացնելով՝ հասցնում մայրիկին:
Լուսիկը գիտէր, որ Ալմասիկն իրեն համար է բերել սրբիչը,
ձեռքը մեկնում էր և թոթովում.

$-U_{\omega_1} \tilde{f}_L, \quad u_{\omega_1} \tilde{f}_L, \quad U_L \mu \omega \dots U_L \mu \omega \dots$

— զայլ կ, — յէ է լ է լ է օգնութ քնի լու
— չա, հա, բալա ջան, տես, նա էլ է օգնութ քնի լու
դացնելիս, պատասխանութ էր մայրիկը, ելլը մեծանաս՝ նրան
կը պատես:

Եւ շունը՝ իր անելիքը կատարելուց յետոյ՝ այսուհետեւ առ
գիստ սրտով կամ խաղում էր լուսիկի հետ և նրան զբաղեցնում,
կամ երբ նա լողանալուց յետոյ՝ անուշ քնում էր, շունը դար-
ձեալ իր առաջւան ծառայութիւնն էր անում մայրիկին, օրօրում
էր փոքրիկի օրօրոցը և հսկում նրան՝ քնած ժամանակ։



Պար աչքը միշտ նախանձու է լինում... Փողոցային տղած ներից շատերը մի քանի անգամ փորձել էին գողանալ Արմասին, բայց չեր յաջողւել, որովհետև՝ որքան նա իրենց տան ամեն մի անդամի հետ՝ մեծանոցի, համբերող և ներողամիտ էր, այնքան՝ օտարի, անծանօթի և կամ կասկածելի անձնաւորութեան դէմ— զարհուրելի, անհամբեր և զայրացկոտ։ Մանաւանդ գիշերները՝ նա առիւծ էր կտրում։ Երբ ամենքը հանգիստ քնած էին լինում, միայն նա էր, որ արծւի հսկողութեամբ դիտում էր տան չորս կողմը։ Մի ոտքը պարտէզումն էր, մէկը բակումն ու պատշաճ էի վրա։ Մի ըստէ դէպի փողոցն էր ուշագիր լինում, իսկոյն կտուրն էր ցատկում, ձեռաց դռների առաջն էր հասնում և երբ կասկածելի ոչինչ չեր գտնում, գալիս էր պատշաճը և իր սեփականածելի ոչինչ չեր գտնում, գալիս էր պատշաճը և կան տունիկում՝ պարկում էր ու մարադ մտնում։ Նա՝ թէև հասկով այնքան էլ մեծ չների ցեղիցը չեր, բայց և այնպէս՝ պըս՝ տիեզ էր ու չստիկ։


Տարիներ շարունակ նա ամենայն հաւատարծութեամբ ապ-
րել էր Գիսակենց տանը և ոչ մեկը նրանից ոչնչով դժգո՞ն չէր:

Միայն, ինչպէս ասացինք՝ չար սիրտը հանգիստ չէր. փողոցային տղանելն ուզում էին Ալմասին անպատճառ ոչնչացնել, որպէսզի կարողանան գիշերով ազատ մտնել Գիսակենց բազը՝ գողութիւն անելու. Թէ և նրանց արած մի քանի փորձը անաջող էր անցել, բայց և այնպէս մի վերջին անգամ էլ փորձեցին:

Մի գիշեր, երբ թանձը խաւարը պատել էր աշխարհը, երբ
մարդիկ ցերեկւայ աշխատանքից յոդնած՝ հանգիստ քնած էին
իրենց տանը, երկու գող, օգտևելով այն հանգամանքից, որ շունը
պատժամբ էր բարձրացել, ցանկալատով ցատկում են բազը,
սակայն հազիւ երկու քայլ արած, Ալմասը վրա է համում և
առիւծի նման յարձակում թէ մէկի և թէ միւսի վրա. Գողերը
ստացած վէրքից զայրացած, վրէժինդիր են լինում շանից. նրան-
ցից մէկը դաշոյնով հարւածում է շան գլխին, գանգը փշում և
ուղեղը ցրում: Աշմասը մնում է տեղն ու տեղը անշնչացած...
ինքը զոհուում է և գողերին չէ թողնում, որ իր տիրոջ ընտանի-
քին որևէ վնաս հասցնեն,

Լուսանալուն պէս, Ալմասի սպանւելու լուրը տարածւում է ողջ թաղը: Գիսակենց ընտանիքի մեծն ու փոքրն անասելի վշտի մէջ են ընկնում: Գիսակը տեսնելով իր սիրելի ընկերակցին մահաւան սոսկալի զրկում, գրեթէ ուշաթափւում է... Անհուն վշտից նա օրերով ու շաբաթով այլևս չի կարողանում հանգստանալ: Թէև Գիսակին միխթարելու համար նրա ծնողները Ալմասին իշենց պարտէզի պատիտակը թաղեցին, որպէսզի նրա յիշատակը չը մոռացւի իրենց սրտից, բայց և այնպէս, որքան շուտ հանգստացն ուրիշները, այնքան Գիսակը համարեա թէ երբէք: Անընդհատ լացն ու կոծը նրան մաշում ու նիհարեցնում էին: Ծնողները տեսնելով իրենց սիրասուն զաւակի տանջանքը՝ նրա համար մի ուրիշ շուն են գտնում, բայց Գիսակը նրանով ոչ միայն չի ուրախանում, այլև մինչև անգամ երեսին էլ չի նայում:

Դառն յիշողութիւնները մնում են Գիսակի մտքում։ Մեծանալուց յետոյ էլ երբեմն երբեմն Գիսակը գնում էր իր սիրելի ընկերակցի գերեզմանին այցելութեան և մտարերում նրա հետ անցկացրած օրերը։



ՄԱՅՐԻԿԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ՀՅ

Ոյսը բացւելուն պէս՝ իրարանցում էր ընկնում ծիծեռնակի փոքրիկ ձագերի մէջ։ Հազիւ մի քանի օր էր, որ նրանք ծնւել էին մեր պատշվամբի տանիքի տակ եղած հին բնում։ Ամբողջ գիշերը, հարթկի ու մարթկի հըսկողութեան տակ, հանգիստ քննուց յետոյ՝ երբ ծագում էր գով առաւօտը, նրանք էլ իսկոյն զարթնում էին և, բաց անելով իրենց լայն ու տափակ կտուցները, ծըւծըւում էին անդաղար և ուտելիք ուզում...

Նրանց ծըւցից քնահարամ էին լինում մերոնց Փիսիկը, Միսիկն ու Փսփսուրիկը և գողէզող գնում էին պատշվամբի ճաղակալի վրա նստում ու, բերաների ջուրը գնալով, դիտում էին վերև, տանիքի տակը հիւսած բնին, նրա մէջ խըլ-պըլտող ծիծեռնակի սիրուն ձագերին։

— Ե՞ս, թէ ճանկս կընկնէք, էնապէս չափեն գլխներիդ ու խժում ձեզ, որ փետուրներդ անգամ շը մնան... մտածում էր Վարսենիկի Փիսիկը և վիզը թեքած զիտում նրանց։

— Օ՞հ, ի՞նչ անուշ միս կընենան է... էրնէկ կըլի, որ ձեր մսի համը տհոնեմ, փսփսում էր ինքն իրեն իս-

կուհու Միսիկն աշքերը շոած, ուղիղ ձագերին նայելով։

— Էնպէս բամփեմ զըլ-խներիդ, որ տեղներիցդ անգամ շը շարժէք, մտածում էր Բարդիկի Փըսփըսուրիկն և գունչը ցից ձագերին էր նայում միալար։

Մինչ այս մինչ այն, ձագերն արդէն առաւուալ նախաճաշիկն էին անում։ Հարիկն ու մարթկը միմեսանց յետևից ի՞նչ ասես որ

Թառ էին լինում բնի վրա


չէին բերում նրանց համար։ հասոլիկ ճանճ, մսալի մորեխ, շաղ-շաղ միջատ, մի խօսքով՝ շատ, շատ-շատ բաներ...

Չէնց որ ծնողները որսից վերադառնում էին կտուցներում որևէ բան բոնած, թառ էին լինում բնի վրա և կտուցները մօտեցնելով ձագերին՝ դեռ մէկի, յետոյ երկրորդի և ապա հերթով միւսների բերաններն էին զնում բերած որսը։

— Վիստ, վիստ, վիստ, այսինքն թէ՝ «ինձ, ինձ, ինձ», աղմկում էին միւսները մէկ-մէկու յետնից։

— ծիւ, ծիւ, ծիւ-«լաւ, լաւ, լաւ», պատասխանում էին ծնողներն և իսկոյն յետ գնում որսի։

Փիսիկի, Միսիկի և Փսփսուրիկի համբերութիւնը հատել էր։ Թէկ մերոնց մանուկները ամեն օր նրանց կարկանդակով էին կշտացնում և վզներն էլ գոյնզգոյն ժա-



պաւէններով էին զարդարում, բայց այդ բոլորը՝ կատուների համար ոչինչ էին:

—Մի տես, մի տես, ինչ անուշ ձայն ունեն է:

—Չայներն որ այդքան անուշ է, ապա միսներն ինչ կըլի, մտածում էին նրանք և ուզում էին փորձել վերև մազլցել. և մէկն էլ չը համբերեց, «հօպ», թռաւ դէպի ձագերը, բայց կիսաճանապարհց ցած ընկաւ:

Եյօ ամենը վաղուց դիտում էր մերոնց մանուկների մայրը: Սա, խղճալով ծիծեռնակներին, մտածեց կատուներին հեռացնել իրենց տանից, որ փորձանք չը պատահի:

—Մայրիկ ջան, հազիր ծիծեռնակներին դուրս անենք, տես, պատշգամբն ոնց են աղտոտել, —խնդրում էր Վարսենիկը, —ես իմ Փիսիկին չեմ հեռացնի:

—Տէ, հոգիս չէ, ծիծեռնակներն արդար և ազիւ թռչուններ են, նրանց բոյնը քանդողի տունը Աստուծ կը քանդի ու եթէ վիրաւորենք նրանց՝ միւս տարի է վերադառնայ մեղ մօտ:

—Ըատ հարկաւոր է, թող իսկի էլ չը գան, ասում էր:

—Այո՛, այո՛ մայրիկ ջան, մեր կատուներին պապոնց տուն տանենք մինչև որ ձագերը կը մեծանան ու ազատ կը թռչն, միջամտում էր խելօք իսկու հին:

—Հէնց այդպէս էլ կանենք: Գիտէ՞ք սիրելիք, ոլէտք է աշխատել ծիծեռնակներին իրենց, ձագերով միշտ անփորձ պահել, որովհետև ով նրանց սպանի՝ նրա ընտանիքը կանբախտանայ և զաւակները համը ու լըբ-լըան կը է են:

—Ի՞նչու, մայրիկ ջան, ինչու կը լինեն լըբ-լըան:

—Ծիծեռնակների մեղրիցը: Տէ որ նրանք էլ ծնողներ են և սիրում են իրենց զաւակներին, պատասխանում է շնա:

Բյուր օրը կատուները պապոնց տանն էին, ուր և

մեառ էին մի առժամանակ, որպէսզի ծիծեռնակի ձա-

զերն ազատ ու անփորձ մեծանան...

— Է մայրիկի կարգադրութիւնը:

— Պ Ե Բ Զ —

Ապօֆենթ. — «Մանկական Ալբոմ»-ին առաջին փոջի սպառելուց իրավուսական առ նրա երկրորդ փոնջը, որի մէջ եղած պատմածքներից ու ուսումնական մի քանիսը թէն արտասպաթիմներ են «Հասկեր»-ից, բայց բարեփրած և պատկերաւորած: Հրապարակ հանելով այս հատքածուն՝ նպարզի ման դնում եմ պաշտօնակից ընկերներիս և անաշառ քննադատների լուրջ ուշազըռութեան տակ, որոնց նշմարիտ խօսքն ինձ համար շատ թանկավին կը լինի:

Խորին չնորհակալութիւն «Հասկեր»-ի խմբագրութեան, որ նեարաւորութիւն տես ինձ օգտակար իր կլիշներից:

ՅԱԿ. ԱԴՐՅԱՆ

ԻՄ ԱՇԽԱՏԱԾԻՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

11

ԼԱՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. «Մանկական ալբոմ» փունջ առաջին (սակաւթիւ)	20 կ.
2. «Փահլաման աքաղաղը»	6 կ.
3. «Այծարած Ղաղօն»	6 կ.
4. «Չալոի Էշլ» (սպառւած)	3 կ.
5. «Գութանի մատաղը»	5 կ.
6. «Գիւղական ցեցեր» Ա. Ճառ	10 կ.
7. «Մանկական ալբոմ» փունջ երկրորդ	20 կ.
8. «Դիստէի Ալմասը»	5 կ.



Գինն է 5 կ.

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Ա

Բ

Մ Ա Ն Ո Ւ Կ Ն Ե Ր Ի Ե Ւ Զ Ա Փ Ա Հ Ա Ա Ն Ե Ր Ի

ՀԱՄԱՐ

- | | |
|--------------------------------|---|
| 1. Հունձ ու փունջ. | 6. Գաղափարի հերոսը. |
| 2. Պապիս ձին. | 7. Երեքը մի զրօշ, պիես 2 զոր |
| 3. Ա՞վ էր մեզաւոր, կատ. 2 զոր. | 8. Բեմի քարոզիչը, (թիֆլ. հայ քահ. կեանքից). |
| 4. Առանեալնիր. | |
| 5. Փափախչի Սթնի դպրոցը. | 9. Արցունքի աղբիւրը (ոտան.). |

Ծախուս է թիֆլիսի և գառառների բոլոր յայտնի
գրավաճառների մօտ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0392584

6345